# Ծ Ր Ա Գ Ի Ր

## ՊԱՋԱՎԻԱՔԻՄԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀՐԱՁԳԱՑԻՆ ԿԱԴՐԵՐԻ (ՎՊՀ, ՎՀ-I, ՎՀ—III) ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ

ОБЯЗАТЕЛЬНЫЙ
ЭКЗЕМПЛЯР

355(47)
Ծ-89

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀՍՍՌ ՊԱՋԱՎԻԱՔԻՄԻ ԿԵՆՏ. ՍՈՎԵՏԻ
ԵՐԵՎԱՆ 1940

40.819
15 MAY 2013
355(47)
Ծ-89
- MAR 2010
15 JAN 2010
2292
41

Հաստատված է
ՍՍՌՄ և ՌՍՖՍՌ Պաշտպանության Կենտ-
գործկոմի Նախագահության կողմից
27 մարտի 1940 թ.

# ԾՐԱԳԻՐ

## ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀՐԱԶԳԱՅԻՆ ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ

(Վորոշիլովյան պատանի հրաձիգների, վորոշիլովյան 1-ին աստիճանի հրաձիգների և վորոշիլովյան 2-րդ աստիճանի հրաձիգների)

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹՅՈՒՆ

1. Նպատակը.— Պատրաստել Լենինը-Ստալինի պարտիայի գործին և սոցիալիստական հայրենիքին անսահմանորեն նվիրված, կարգապահ, ձեռներեց, տոկուն և անձնազոհ հրաձիգներ, ոժտված՝ մարտական պարապմունքում վճռական գործողությունների համար գործնական ունակություններով ու գիտելիքներով:

2. Պատրաստման կարգը. Վորոշիլովյան հրաձիգների պատրաստությունն անց է կացվում Պաշտպանության ինքնաշեջ կազմակերպությունների խմբակներում և հրաձգային ակումբներում:

Ծրագրերը կառուցված են հրաձիգների հաջորդական պատրաստման հաշվով. ՎՊՀ (վորոշիլովյան պատանի հրաձիգ) կոչում ստացածներն անցնում են ՎՀ—I (վորոշիլովյան 1-ին աստիճանի հրաձիգ) կոչման նորմաներն անցնելուն, իսկ վերջինները ոչ ուշ, քան մեկ ու կես տարվա ժամկետում, կարող են նախապատրաստվել ՎՀ—II (վորոշիլովյան 2-րդ աստիճանի հրաձիգ) ծրագրով նորմաները հանձնելու համար:

Վորոշիլովյան 2-րդ աստիճանի հրաձիգները 2 տար-

վա ժամկետն անցնելուց հետո պարտավոր են հանձնել շարային, տակտիկական և հրաձգային պատրաստության (հատուկ ծրագրով) կրկնական ստուգումներ։ Ստուգումներ չհանձնողները կորցնում են Վ.Հ—II կոչման իրավունքը։

Վ.Պ.Հ պատրաստվում են 13-ից մինչև 16 տարեկան հասակ ունեցող պիոներներից, դպրոցականներից և ֆաբգործուսների աշակերտներից։ Վորոշիլովյան 1-ին և 2-րդ աստիճանների հրաձիգներին— պատրաստել Պաշավիաքիմի ֆիզիկապես առողջ անդամներից, որոնք կարող են կիրառել ստացած ռազմական մասնագիտությունը,— որպես Կարմիր բանակի մարտական ռեզերվ։

Ուսուցումն ավարտելուց հետո անց են կացվում ստուգումներ յուրաքանչյուր աստիճանի ծրագրի ծավալով։

Համապատասխան աստիճանի Վ.Հ կոչումը տրվում է այն անձանց, որոնք հանձնել են ստուգումները ծրագրի բոլոր դիսցիպլիններից և կատարել են նախապատրաստական ու քննական հրաձգությունները։

Վ.Պ.Հ և Վ.Հ—I կոչում ստանալու ստուգումները կատարում է հանձնաժողովը հետևյալ կազմով՝ նախագահ (հրաձգային ակումբի պետը կամ ռազմավարժական կայանի պետը) և երկու անդամ (հրաձիգներին պատրաստող հրահանգիչը և կոմերիտական կազմակերպության ներկայացուցիչը)։

Վ.Հ—II կոչում ստանալու ստուգումը կատարում է հանձնաժողովը հետևյալ կազմով՝ նախագահ— զորամասի կամ ռազմական կոմիսարիատի ներկայացուցիչը և անդամներ— հրաձգային ակումբի, դպրոցի կամ ռազմա-վարժական կայանի պետը, հրաձիգներին պատրաստող հրահանգիչը, Պաշավիաքիմի շրջսովետի ներկայացուցիչը և Համկ(բ)Պ շրջկոմի ռազմական բաժնի ներկայացուցիչը։

Ստուգումները հանձնած անձնավորությունների



համար ակտ է կազմվում երկու օրինակից, որոնցից մեկը ներկայացվում է Պաշավիաքիմի վերադաս կազմակերպությանը, իսկ մյուսը պահվում է տեղական կազմակերպություններում։

Վ.Պ.Հ կոչման հատկացումը հաստատվում է սկզբնական կազմակերպության կողմից, Վ.Հ—I կոչման հատկացումը՝ Պաշավիաքիմի շրջսովետի նախագահությունների կողմից՝ հրաձգային ակումբների, սկզբնական կազմակերպությունների և ռազմա-վարժականների կողմից ակտերը ներկայացնելուց հետո, իսկ Վ.Հ—II կոչման հատկացումը՝ Պաշավիաքիմի շրջսովետների նախագահությունների կողմից՝ հրաձգային ակումբների կամ դպրոցների և ռազմավարժականների կողմից ակտերը ներկայացնելուց հետո։

Ակտերը հաստատելուց հետո ստուգումների արդյունքները մտցվում են հրաձգի գրքույկի մեջ ու վավերացվում են հրահանգչի կողմից, կնքելով Պաշավիաքիմի տեղական կազմակերպության կնիքով։ Միաժամանակ հրաձգի համար լրացվում է հրաձգային քարտը, որը պահվում է հրաձգի աշխատանքի (ապրելու) տեղի Պաշավիաքիմի սկզբնական կազմակերպությունում։

Վ.Հ կրծքանշանների հանձնումը կատարվում է հանդիսավոր պարագայում, Պաշավիաքիմի սկզբնական կազմակերպության ընդհանուր ժողովում։

Բոլոր պարապմունքներն անց են կացվում, պահպանելով զինվորական հաստատուն կարգապահություն, լայնորեն ծավալված սոցիալիստական մրցակցության հիման վրա։

## ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

1. Հրաձգի ուսուցումն անցկացնել Կարմիր բանակի կանոնադրքերի և հրահանգների հիման վրա՝ հրաձգի յուրաքանչյուր գործողությունը և յուրաքանչյուր

շարժումը հրահանգչի կողմից ցույց տալու մեթոդով։

2. Շարային պատրաստության ուսուցումն սկսել կեցվածքի մշակումից և հետագա պարապմունքների ու շարվածքների պրոցեսում կատարելագործել հրաձիգների շարային կեցվածքը։

Անհատական ուսուցման ժամանակ կարելի է հրաձիգներին թույլ տալ ինքնուրույն կերպով մարզանք կատարելու, բայց միմիայն հրահանգչի հսկողության տակ։

Դարձումների և քայլելու ուսուցումն անց է կացվում յուրաքանչյուր սովորողի հետ առանձին, ավարտելով շարային պատրաստությունը ջոկի կազմում, խոկ ձեռնամարտի ուսուցումն ու մարզանքն անցկացնել մարտական պարագային մաքսիմալ չափով մոտեցող պայմաններում։ Խոցումների և հարվածների բոլոր պրեյոմները պետք է մշակել միմիայն նպատակներին (խրամվիլակներին) հարվածելու միջոցով։

3. Կրակային պատրաստության ուսուցումը պետք է անհատական բնույթ կրի։ Հրահանգիչը պետք է ուսումնասիրի և լավ իմանա յուրաքանչյուր հրաձգի առանձնահատկությունները, նկատի և անհապաղ վերացնի նրա սխալները։ Խնամքով մշակի հրաձգության նախապատրաստական վարժությունները։ Հրաձգության թույլ չտալ այն սովորողներին, որոնք չեն յուրացրել ճիշտ պատրաստվելու և ճիշտ ու միատեսակ նշանառության պրեյոմները։ Չպետք է անցնել հեհևյալ վարժության հրաձգությանը, առանց նախորդ վարժությունը կատարելու։

Զենքի ուսումնասիրությունն անցկացնել գործնականորեն՝ վարժական զենքի վրա։

Բալլիստիկայի (ձգաբանության) վերաբերյալ տեղեկությունները դասավանդել նույնպես գործնականորեն՝ հրաձգային պրիբորների, դծագրերի և սխեմաների վրա։



4. Տակտիկական պատրաստության ուսուցումն անցկացնել վայրում հրաձգի գործողությունները ցույց տալու միջոցով և հետո կրկնելու և մարզանք կատարելու միջոցով։

5. Ֆիզիկական պատրաստության մարմնամարզությունն անց է կացվում ընդհանուր կարգով դրոշրոցներում և ֆիզկուլտուրային կազմակերպություններում. հրաձգային խմբակներում և ակումբներում յուրաքանչյուր պարապմունքից առաջ անցկացնել հրաձգային և ֆիզիկական մարզանք 10—15 րոպե։

6. Ծրագրերում տված նորմաները պարտադիր են։ Դրանց ոչ մի փոփոխություն թույլ չի տրվում։

# Ծ Ր Ա Գ Ի Ր

## ՎՈՐՈՇԻԼՈՎՅԱՆ ՊԱՏԱՆԻ ՀՐԱՁԳԻ (ՎՊՀ) ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ

Նպատակը.— *Սովորող երիտասարդությանը տալ ռազմական տարրական գիտելիքներ և գործնական ունակություններ շարային պատրաստությունից, հրաձգային գործից և ֆիզիկական զարգացումից:*

Ուսումնական ժամանակի հաշվարկը

| | | |
|---|---|---|
| 1. | Քաղպատրաստություն . . . . | 5 ժամ |
| 2. | Ներքին ծառայության կանոնագիրք | 4 ժամ |
| 3. | Շարային պատրաստություն . . | 10 ժամ |
| 4. | Կրակային պատրաստություն . . | 35 ժամ |
| 5. | Տեղագրություն . . . . . | 6 ժամ |
| 6. | Քիմպատրաստություն . . . . | 4 ժամ |
| 7. | Ֆիզիկական պատրաստություն . | — |
| 8. | Քննական ստուգումներ . . . . . | 6 ժամ |
| | Ընդամենը . . . | 70 ժամ |

## ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

### I. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ (5 ժամ)

Ընթացիկ քաղաքականություն. *Պարապմունքների թեմաները մշակվում են Պաշավիաքիմի սովետի կողմից և համաձայնեցվում են Համկ(բ)Պ մարզային (երկրային) կոմիտեի հետ:*



### II. ԲԳԿԲ ՆԵՐՔԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ (4 ժամ)

*Զինվորական ծառայողների պարտականությունները:*

*Կարմիր բանակում ընդունված զինվորական կոչումները և տարբերական նշանները:*

Ձեռնարկ.— *ԲԳԿԲ ներքին ծառայության կանոնագիրք* (УВС—37) § 3—9 *և* § 14:

### III. ՇԱՐԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ (10 ժամ)

Ա ն հ ա տ մ ա ր տ ի կ ի

*Հասկացողություն շարքի մասին: Կեցվածք, դարձումներ, շարժում, հակադաշ հաղնելը և հանելը:*

Ջ ո կ ի կ ա զ մ ո ւ մ

*Շարված, դարձումներ, շարժում երկայնած ճակատով, միաչար և զուգաչար սյունով: Շարժում դահուկներով միաչար սյունով:*

Ձեռնարկ.— *Հետևակի շարային կանոնագիրք*, 1938 *թ.* § § 1—22, 25—41, 80—83, 104—106, 107, 108, 110, 127—129:

### IV. ԿՐԱԿԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ (35 ժամ):

### *ՓՈՔՐԱԿԱԼԻԲՐ ՀՐԱՑԱՆԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄԱՍԸ* (6 ժամ):

*Փոքրակալիբր* ТОЗ—8, ТОЗ—9 *հրացանների և փոքրակալիբր փամփշտի կառուցվածքը: Հրացանը և փամփուշտները խնամելու և պահելու կանոնները և հրացանի մաքրումը:*

Ձեռնարկ.— *Մ. Զանեգին— Պատանի հրաձիգ, ՍՍՌՄ Պաշավիաքիմի Կենտսովետի խմբագրատարակչություն*, 1939 *թ.*, *էջեր՝* 46—57, 60—65:

### 1933 ԹՎԻ ՏԻՊԱՐԻ ՁԵՌՔԻ ՆՈՆԱԿԻ (РГД—33) ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄԱՍԸ (4 ժամ)

*Նոնակի մարտական հատկություններն ու նշանակումը: Նոնակի և պայթուցիչի (զապալի) կառուց-*

վածքը և հիմնական մասերի անունները:

Ձեռնարկ.— Հրաձգային գործի հրահանգ, 1938 թ., (НСД—38), ձեռքի նռնակներ, էջ՝ 5—20:

Ձեռնարկ.— Մ. Զանեգին— Պատանի նռնաձիգ, ՍՍՌՄ Պաշտպանության Կենտրոնական խմբահրատարակչություն, 1939 թ., էջեր 8—13:

## ՀՐԱՁԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ (4 ժամ)

Հասկացողություն ձիգի մասին: Ակոսների նշանակությունը: Նշանառուի և հատիկի նշանակումը: Նշանառության գիծը, նշանառության կետը և դիպման կետը:

Հրաձգության դիպուկության վրա ազդող պատճառները, որոնք կախված են հրաձգից և զենքից:

Փոքրակալիբր զնդակի ծակողական գործողությունը:

Ձեռնարկներ.— Պոնոմարեվ—Կիրառական ձգաբանություն հրաձգի համար, ռազմահրատարակչություն, 1939, էջեր՝ 39, 92, 109, 195:

Մ. Զանեգին— Պատանի հրաձիգ, էջեր՝ 10—12, 27—29, 31—34:

## ՀՐԱՁԳՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ (10 ժամ)

Պառկած հրաձգության պատրաստվելը, օգտագործելով փոկը կամ հենարանը: Հրացանը լցնելը և դատարկելը: Նշանառության պատրաստվելը, նշանառություն և հրահանն լիցնելը: Նշանառության ճշտության և միատեսակության ստուգումը:

Անվտանգության միջոցները հրաձգային պարապմունքներն ու հրաձգություններն անցկացնելու ժամանակ:

Ձեռնարկ.— Մ. Զանեգին— Պատանի հրաձիգ, էջեր՝ 66—73:



## ՀՐԱՁԳՈՒԹՅՈՒՆ (11 ժամ)

Փոքրակալիբր ТОЗ—8 կամ ТОЗ—9 հրացանով, բաց նշանոցով:

### 1-ին նախապատրաստական վարժություն

1) Նպատակը— Թիրախ № 6.
2) Հեռավորությունը— 25 մետր.
3) Փամփուշտները—3
4) Դրությունը հրաձգության համար— պառկած, օգտագործելով հրացանի փոկը կամ հենարանը.
5) Ժամանակը հրաձգության համար— անսահմանափակ.
6) Դիպումները ցույց տալը— յուրաքանչյուր ձիգից հետո.
7) Գնահատումը— ոչ մի զնդակ դուրս չթողնել № 6 շրջագծից:

### 2-րդ նախապատրաստական վարժություն

1) Նպատակը— Թիրախ № 9-a (կրծքաչափ, 10 անգամ փոքրացրած).
2) Հեռավորությունը— 25 մետր.
3) Փամփուշտները— 3.
4) Դրությունը հրաձգության համար— պառկած, օգտագործելով հրացանի փոկը կամ հենարանը.
5) Ժամանակը հրաձգության համար— անսահմանափակ.
6) Դիպումները ցույց տալը— յուրաքանչյուր ձիգից հետո.
7) Գնահատականը— «գերազանց»— 3 դիպում. «լավ»— 2 դիպում. «միջակ»— 1 դիպում թիրախին:

## ՆՌՆԱԿՆԵՐ ՆԵՏԵԼԸ (թեթևացրած կոճղակ, 500 գրամ քաշով).

1-ին նախապատրաստական վարժություն— նռնակի նետում կանգնած, տեղից հորիզոնական նպատակի վրա

1) նպատակը— չրջան 3 մետր տրամագծով.
2) հեռավորությունը— 12 մետր.
3) նռնակների քանակը— 3 հատ.
5) գնահատականը— «գերազանց»— նպատակին դիպցնել 3 նռնակ. «լավ»— 2 նռնակ. «միջակ»— 1 նռնակ:

Գնահատականը տրվում է նռնակի առաջին անկման տեղի համեմատ:

2-րդ նախապատրաստական վարժություն— նռնակի նետում կանգնած, տեղից ուղղաձիգ նպատակների վրա

1) նպատակը— 3 պատուհան 100 սմ բարձրությամբ և 75 սմ լայնությամբ, որոնք դրված են գետնից 1—2 մետր բարձրության վրա չափատային կարգով.
2) հեռավորությունը— մինչև 1-ին նպատակը— 8 մ, մինչև 2-րդ նպատակը— 10 մ, մինչև 3-րդ նպատակը— 12 մետր.
3) նռնակների քանակը— 3 հատ.
4) ժամանակը— անսահմանափակ.
5) գնահատականը— «գերազանց»— դիպցնել 3 պատուհանի. «լավ»— 2 պատուհանի. «միջակ»— 1 պատուհանի:

Կատարման կարգը: Հրաձիգն ստանում է նռնակները բնաձի վրա և ինքնուրույն կերպով նետում է նռնակները երեք նպատակի վրա:

Ձեռնարկ.— Կրակային պատրաստության կուրս (КОП—38), էջ՝ 38: Ձեռնամարտի հրահանգ (НПРБ—38), էջեր՝ 202—204:



Ձեռնարկ.— Մ. Զանեղին— Պատանի նռնաձիգ, էջեր՝ 20—35:

## V. ՏԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ 6 (ժամ)

Վայրի և տեղական առարկաների նշանակությունը մարտում:

Վայրի տարատեսակությունները՝ բաց, ծածկված և կարտուկ: Ընդհանուր հասկացողություն կողմնորոշման մասին: Կողմնացույցը և նրա կառուցվածքը:

Հորիզոնի կողմերի մոտավոր որոշումը արեգակով, աստղերով և տեղական առարկաներով:

Ձեռնարկ.— Շեբալին— Ռազմական տեղագրություն, էջեր՝ 6—8, 80—84:,

## VI. ՔԻՄԻԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ (4 ժամ)

Իմանալ ԴՊ—1 հակագազի կառուցվածքը և դրանով օգտվելու կանոնները: Կարողանալ մարտական աշխատանք կատարել հակագազերը հագած 45 րոպեի ընթացքում:

Ձեռնարկ.— Պիոնեներներին և դպրոցականներին ՀՕՔՊ մասին. Ռազմ. հրատ. 1940 թ., էջեր՝ 36—46:

## VII. ՖԻԶԻԿԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Նորմաների հանձնումն անց է կացվում ֆիզկուլտուրային կազմակերպություններին կից «Եղիր Պատրաստ Աշխատանքի և Պաշտպանության» (ԵՊԱՊ) կոմպլեքսով: ԵՊԱՊ կրծքանշանի նորմաները հանձնածներին հաշվվում է ֆիզիկական պատրաստության քննությունը: ԵՊԱՊ կրծքանշան չունեցողները պարտավոր են հանձնել ԵՊԱՊ կոմպլեքսի ընդհանուր պահանջների ծավալով հետևյալ նորմաները.

### Դահուկներից

3 կիլոմետր հեռավորությունն անցնել 22 րոպեյում.

Անձյուն չրջանների համար դահուկային երթի փոխարեն նշանակվում է հետիոտն երթ 10 կմ հեռա-

վորությամբ 2 ժամ 20 րոպեյում (պատանիների և աղջիկների համար)։

## ՎԱԶՔ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԱՐԴԵԼՔՆԵՐՈՎ 100 ՄԵՏՐ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ

Հեռավորությունը հաղթահարել 28 վայրկյանում։

Վերոհիշյալ նորմաները հանձնածները ֆիզկուլտուրային կազմակերպություններից ներկայացնում են համապատասխան տեղեկանքներ։

## ԲՆՆՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԱԾ ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ (6 ժամ)

1. Գիտելիքների ստուգում ներկա ծրագրի ծավալով։

2. Հետևյալ քննական վարժությունների կատարում։

### ա. ՀՐԱԶԳՈՒԹՅՈՒՆ

1) Նպատակը— թիրախ № 9-ա (10 անդամ փոքրացրած)։

2) Հեռավորությունը— 25 մ։

3) փամփուշտները— 2 փորձնական և 3 քննական։

4) դրությունը հրաձգության համար— պառկած, օգտագործելով հրացանի փոկը կամ հենարանը։

5) ժամանակը հրաձգության համար— անսահմանափակ։

6) դիպումները ցույց տալը— փորձնականներից և բոլոր քննական ձիգերից հետո։

7) գնահատականը։ «գերազանց»— 24 աչկո, «լավ»— 20 աչկո և «միջակ»— 18 աչկո»։



### բ. ՆՌՆԱՆԵՏՈՒՄ

2-րդ նախապատրաստական վարժություն

## ՓՈՌՐԱԿԱԼԻԲՐ ՓԱՄՓՈՒՇՏՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԸ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՀՐԱԶԳԻ ՀԱՄԱՐ

| | |
|---|---|
| Նախապատրաստական վարժությունների համար | 6 |
| Քննական հրաձգության համար . . . . . | 5 |
| ՌՈՒԲ պետի ուղերվ . . . . . | 10 |
| Ընդամենը . . . . | 21 փամփուշտ |

# Ծ Ր Ա Գ Ի Ր

## ՎՈՐՈՇԻԼՈՎՅԱՆ 1-ԻՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀՐԱՁԳԻ (ՎՀ—1) ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ

*Նպատակը՝ Աշխատավոր երիտասարդությանը տալ հիմնական սկզբնական ռազմական գիտելիքներ և գործնական ունակություններ շարային, տակտիկական և հրաձգային պատրաստությունից և ֆիզիկական զարգացումից։*

Ուսումնական ժամանակի հաշվարկը

| | | |
|---|---|---|
| 1. | Քաղաքական պատրաստություն | 8 ժամ |
| 2. | Ներքին ծառայության կանոնագիրք | 4 » |
| 3. | Պահակային ծառայության կանոնագիրք | 6 » |
| 4. | Շարային պատրաստություն | 22 » |
| 5. | Կրակային պատրաստություն | 37 » |
| 6. | Տեղագրություն | 6 » |
| 7. | Քիմիական պատրաստություն | 6 » |
| 8. | Տակտիկական պատրաստություն | 18 » |
| 9. | Ֆիզիկական պատրաստություն | — |
| 10. | Քննական ստուգումներ | 8 » |
| | Ընդամենը | 115 ժամ |



## ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

### I. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ (8 ժամ)

*Ընթացիկ քաղաքականություն։ Թեմաները մշակվում են Պաշավիաքիմի սովետի կողմից և համաձայնեցվում են ՀամԿ(բ)Պ մարզային (երկրային) կոմիտեի հետ։*

### II. ԲԳԿԲ ՆԵՐՔԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ (4 ժամ)

*Զինվորական ծառայողների պարտականությունները։ Վաղջուններ շարքում ու շարքից դուրս։ Վերակարգի անձանց ընդհանուր պարտականությունները։ Վաշտի օրավորակի պարտականությունները։*

Ձեռնարկ՝— ԲԳԿԲ Ներքին ծառայության կանոնագիրք § § 16—26, 27—39, 168, 169, 200 և 201։

### III. ՊԱՀԱԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ (6 ժամ)

*Պահակային ծառայության նշանակումը։ Պահակների կազմակերպումը։ Ի՞նչ է պոստը և նրա նշանակումը։ Ժամապահի պարտականությունները։*

Ձեռնարկ՝—ԲԳԿԲ Պահակային ծառայության կանոնագիրք § § 1—8, 73—88։

### IV. ՇԱՐԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ (22 ժամ)

Ա ն հ ա տ մ ա ր տ ի կ ի

*Կեցվածք հրացանով, շարժում, դարձումներ տեղում և շարժման ժամանակ։ Հրացանային պրիյոմներ՝ «փոկի առ», «ոտքիդ», «ուսիդ առ», «ոտքիդ»։*

*Պրիյոմներ մարտի համար։ Խոցում՝ ձախ և աջ վոտի արտանկումով— կարճ և երկար։ Վաղելազքեր և սողումներ։ Հակագազ հագնելը և հանելը։*

ՀՍՍՀ-ՍՍՀ Ա.

## Զ ո կ ի կ ա զ մ ո ւ մ

*Միատողան և երկտողան շարվելը, դարձումներ տեղում և շարժման ժամանակ։ Հրաձգի շարքից դուրս գալը և շարք վերադառնալը։ Զոկի շարափոխումը միատողան շարքից երկտողանի և ընդհակառակը։*

*Միաչար, զուգաչար երթային սյունի շարվելը։ Ուղղության փոխումը, թևի շրջումը։ Զոկի երթային դրությունից մարտակարգի անցնելը։*

Ձեռնարկ։— *Հետևակի շարային կանոնադիրք*, 1938 *թ.*, §§ 44—54, 64—71, 80—83, 104—118, 125, 127—129։

## V. ԿՐԱԿԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ (37 ժամ)

### ՓՈՔՐԱԿԱԼԻԲԸ ՀՐԱՅԱՆԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄԱՍԸ (2 ժամ)

Կրկնել։ *Փոքրակալիբը* ТОЗ—8, ТОЗ—9 *հրացանի և փոքրակալիբը փամփշտի կառուցվածքը։ Հրացանը և փամփուշտները խնամելու և պահելու կանոնները և հրացանի մաքրումը։ Անվտանգության միջոցները հրաձգության և պարապմունքների ժամանակ։*

Ձեռնարկ։ *Մ. Զանեղին— Պատանի հրաձիգ*, էջ՝ 47—65։

### 7,62 *մմ* ՀՐԱՅԱՆԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄԱՍԸ (6 ժամ)

*7,62 մմ հրացանի մարտական հատկությունները և նշանակումը։ Հրացանի կառուցվածքը։ փողն ու փողատուփը, նշանոցը և հատիկը, փակաղակը, պահեստատուփը, ազուստը և սվինը։ Հրացանը քանդելն ու հավաքելը։ Հրացանը խնամելը և նրա հետ վարվելը, հրացանը մաքրելու և յուղելու կարգը։ Փամփշտի կառուցվածքին ծանոթանալը։ Անվտանգության միջոցները հրաձգության և պարապմունքների ժամանակ։*

Ձեռնարկներ։ НСД—38, *Հրացան*, էջեր՝ 7—29, 38—50։



*Վ. Գլազատով— Մարտական հրացան*, էջեր՝ 3—8, 27, 44 և 59։

## ՁԵՌԲԻ ՆՈՒՆԱԿ 1933 *Թ. ՏԻՊԱՐԻ* (РГД—33) (4 ժամ)

### Նյութական մաս

*Նռնակների մարտական հատկությունները և նշանակումը։ Նռնակի և բուծինի (զապալի) կառուցվածքը, նռնակների մասերը և մեխանիզմները։ Նռնակի մեխանիզմների աշխատանքը լցնելու և նետելու ժամանակ։ Նռնակի դատարկումը։ Անվտանգության միջոցները։*

Ձեռնարկ։ НСД—38, *Ձեռքի նռնակներ*, էջեր՝ 5—18, 23—24։

## ՀՐԱՁԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ (7 ժամ)

*Հասկացողություն ձիգի մասին։ Ինչպե՞ս է տեղի ունենում ձիգը, ինչպե՞ս է թռչում գնդակն օդում։ Հասկացողություն հետագծի մասին։ Հետագծի բարձրադունությունը մինչև 200 մետր հեռավորության վրա։ Նշանոցը և հատիկը, նշանառություն դիծ, նշանառության կետ, դիպման կետ։*

*Հրաձգության դիպուկության վրա ազդող պատճառները, որոնք կախված են հրաձգից, զենքից և եղանակից։*

Ձեռնարկ։ *Պոնոմարեվ—Կիբառակրան ձգարանություն հրաձգի համար*, էջեր՝ 39—44, 80—86, 172—183, 207։

*Ա. Կարաչևսկի— Սովորիր դիպուկ կրակել*, էջեր՝ **26**, 41—48։

## ՀՐԱԶԳՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ (10 ժամ)

*Հրաձգության պատրաստվելը՝ պառկած և ծնկից: Հրացանը լցնելը, նշանոցը հասցնելը, ուսին դեմ տալը, նշան բռնելը, հրահանն իջեցնելը, վերալցնելը: Նշան բռնելու ճշտության և մխատեսակության ստուգումը: Մարզանք՝ հրաձգության բոլոր պրիյոմները միացնելու գործում: Հենարանից և ծածկարանի ետևից հրաձգություն կատարելու պրիյոմները:*

Ցեռնարկներ. НСД—38, Հրացան, էջեր՝ 74—82, 86—87:

*Կրակային պատրաստություն, ՍՍՌՄ Պաշտվիաքիմի ԿՍ խմբագրահրատարակչություն, 1938 թ., էջեր՝ 133—140:*

*Մ. Զանեղին—Պատանի հրաձիգ, էջեր՝ 66—72:*

### ՀՐԱԶԳՈՒԹՅՈՒՆ (4 ժամ)

*Փոքրակալիբր հրացանով:*

1-ին նախապատրաստական վարժություն

1) *Նպատակը— թիրախ № 6.*
2) *Հեռավորությունը— 25 մ.*
3) *Փամփուշտները— 3.*
4) *Դրությունը—պառկած, վոկն օգտագործելով.*
5) *Ժամանակը հրաձգության համար—անսահմանափակ.*
6) *Դիպումները ցույց տալը—յուրաքանչյուր ձիգից հետո.*
7) *Գնահատումը—ոչ մի գնդակ դուրս չթողնել № 6 շրջանից. «գերազանց»— 24 աչկո, «լավ»—21 աչկո, «միջակ»—18 աչկո:*



2-րդ նախապատրաստական վարժություն

1) *Նպատակը—թիրախ № 7.*
2) *Հեռավորությունը— 50 մ.*
3) *Փամփուշտները— 3.*
4) *Դրությունը հրաձգության համար— պառկած, հենարանից.*
5) *Ժամանակը հրաձգության համար— անսահմանափակ.*
6) *Դիպումները ցույց տալը—յուրաքանչյուր ձիգից հետո:*
7) *Գնահատականը. «գերազանց»— 26 աչկո, «լավ»— 24 աչկո, «միջակ»—22 աչկո:*

### ՆՌՆԱԿՆԵՐ ՆԵՏԵԼԸ (4 ժամ)

1-ին նախապատրաստական վարժություն—նետում ծնկից

1) *Նպատակը—շրջան 3 մետր տրամագծով.*
2) *Հեռավորությունը— 20 մ.*
3) *Նռնակների քանակը—3 հատ.*
4) *Ժամանակը—անսահմանափակ.*
5) *Գնահատականը. «գերազանց»—շրջանին 3 նռնակ դիպցնել, «լավ»—2 նռնակ, «միջակ»—1 նռնակ:*

*Գնահատականը տրվում է նռնակի առաջին անկման տեղի համեմատ:*

2-րդ նախապատրաստական վարժություն—նետում ֆայլելիս՝ խրամատի մեջ

1) *Նպատակը—խրամատ 0,5 մ. խորությամբ, 1 մ. լայնությամբ, 3 մ. երկարությամբ:*
2) *Հեռավորությունը— 20 մետր.*
3) *Նռնակների քանակը—3 հատ.*
4) *Ժամանակը—3 րոպե.*

5) Գնահատականը. «գերազանց»—խրամատին 3 նռնակ գիրգնել, «լավ»—2 նռնակ, «միջակ»—1 նռնակ:

Գնահատականը տրվում է նռնակի առաջին անկման տեղի համեմատ:

Կատարման կարգը: Հրաձիգը նպատակից 50 մետր հեռակայությունից գնում է արագ քայլով և նպատակից 20 մետրից ոչ պակաս հեռավորությունից նետում է նռնակները քայլելիս:

## VI. ՏԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ (6 ժամ)

1. Ընդհանուր հասկացողություն քարտեզի, պլանի և մասշտաբի մասին. Թվական և գծային մասշտաբ:

Մասշտաբով օգտվելը:

2. Ռազմա-տեղագրական նշանների նկարումը քարտեզի վրա: Քարտեզներ կարդալը:

Ձեռնարկ: Շերային—Ռազմական տեղագրություն, էջեր՝ 15—27, 30—62:

## VII. ՔԻՄԻԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ (6 ժամ)

Թունավորող նյութեր, դրանց կլասիֆիկացիան և ներգործությունը: ԲՀ հակագազի կառուցվածքը: Հակագազով օգտվելու կանոնները: Հրացանի դաղահանումը:

Ձեռնարկներ: ՀՍԴ—38 թ., Հրացան 1891—30 թ. տիպարի, §§ 94—99.

ԲԳԿԲ Հետևակի շարային կանոնագիրք §§ 80—91.

Պիոներներին և դպրոցականներին ՀՕՔՊ մասին, Ռազմական հրատարակչություն 1940 թ.: էջեր՝ 17—24 և 46—49:



## VIII. ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ (18 ժամ)

Հարձակում: Թագուն ճանապարհի ընտրությունը, շարժման եղանակները և քողարկման միջոցները (վաղեվաղքեր, սողումներ): Հրաձգության համար հարմար տեղի ընտրությունը, հեռավորությունների որոշումը, դիտողություն, կրակ վարելը, կրակի և շարժման համադործակցությունը:

Ձեռնարկ: Հետևակի մարտական կանոնագիրք 1938 թ. (БУП—1—38) §§ 16—32, НСД—38, Հրացան, §§ 152—155:

Պաշտպանություն: Տեղի ընտրությունը պաշտպանության և հրաձգության համար: Տեղական առարկաների օգտագործումը: Դիտողություն: Մինչև տեղական առարկաները եղած հեռավորությունների որոշումը (մինչև 300 մետր): Գրոհող հակառակորդի վրա կրակ բանալու նախապատրաստությունը: Մարտապաշարի լրացումը:

Ձեռնարկ: БУП—1—38. §§ 33—41, 70—73:

## IX. ՖԻԶԻԿԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Ֆիզիկական պատրաստության նորմաների հանձնումն անց է կացվում ֆիզկուլտուրային կազմակերպություններին կից ՊԱՊ-ի 1-ին աստիճանի կոմպլեքսով: ՊԱՊ-ի 1-ին աստիճանի կրծքանշանի նորմաները հանձնածներին հաշվվում է ֆիզիկական պատրաստության քննության հանձնումը: ՊԱՊ-ի 1-ին աստիճանի կրծքանշան չունեցողները պարտավոր են հանձնել ՊԱՊ-ի 1-ին աստիճանի կոմպլեքսի ընդհանուր պահանջների ծավալով հետևյալ նորմաները:

### ԴԱՀՈՒԿՆԵՐԻՑ

10 կիլոմետրանոց երթ:

### ՀՐԱՑԱՆԸ ՁԵՌՔԻՆ ԱՐԳԵԼՔՆԵՐԻ ՇԵՐՏԻ ՀԱՂԹԱՀԱՐՈՒՄԸ

Հաղթահարել արգելքների 150 մետրանոց շերտը հրացանը ձեռքին:

Վերոհիշյալ նորմաները հանձնածները ներկայացնում են համապատասխան տեղեկանքներ ֆիզկուլտուրային կազմակերպություններից։

## ՔՆՆԱԿԱՆ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ ԱՆՑԱԾ ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ (8 ժամ)

1. Դիտելիքների ստուգում ներկա ծրագրի ծավալով։
2. Հետևյալ քննական վարժությունների կատարում.

### Ա) ՀՐԱՁԳՈՒԹՅՈՒՆ

Փոքրակալիբր ТОЗ—8, ТОЗ—9 հրացան, բաց նշանոցով։

1) Նպատակը—թիրախ № 7.
2) Հեռավորությունը—50 մետր.
3) Փամփուշտները—3 վարժական և 5 քննական.
4) Դրությունը հրաձգության համար—պառկած՝ ձեռքից (հրացանի փոկի օգտագործումը թույլ է տրվում).
5) Ժամանակը հրաձգության համար—5 րոպե.
6) Գնահատականը. «գերազանց»—45 աչկո, «լավ»—42 աչկո, «միջակ»—40 աչկո։

### Բ) ՆՌՆԱԿԱՆԵՏՈՒՄ

2-րդ նախապատրաստական վարժություն։

## ՓՈՔՐԱԿԱԼԻԲՐ ՓԱՄՓՈՒՇՏՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԸ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՀՐԱՁԳԻ ՀԱՄԱՐ

| | |
|---|---|
| Նախապատրաստական վարժությունների համար | 6 |
| Քննական հրաձգությունների համար | 8 |
| ՌՈՒԲ պետի տեղերվը | 11 |
| Ընդամենը | 25 փամփուշտ |



## Ծ Ր Ա Գ Ի Ր

## ՎՈՐՈՇԻԼՈՎՅԱՆ 2-ՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ ՀՐԱՁԳԻ (ՎՀ—II) ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ

Նպատակը։ Աշխատավոր երիտասարդությանը տալ ռազմական դիտելիքների հիմունք և գործնական ունակություններ՝ շարային, կրակային, տակտիկական և ֆիզիկական պատրաստության վերաբերյալ, մարտական պարապմունքում ինքնուրույն կերպով և ջոկի կազմում գործելու համար։

### Ուսումնական ժամանակի հաշվարկը

| | | |
|---|---|---|
| 1. Քաղաքական պատրաստություն | 10 | ժամ |
| 2. Պահակային ծառայության կանոնադիրք | 6 | ժամ |
| 3. Շարային պատրաստություն | 12 | ժամ |
| 4. Կրակային պատրաստություն | 45 | ժամ |
| 5. Տակտիկական պատրաստություն | 38 | ժամ |
| 6. Քիմիական պատրաստություն | 6 | ժամ |
| 7. Սապյորական պատրաստություն | 6 | ժամ |
| 8. Տեղագրություն | 10 | ժամ |
| 9. Սանիտարական պատրաստություն | 6 | ժամ |
| 10. Զինվորական կարգապահության կանոնադիրք | 3 | ժամ |
| 11. Ֆիզիկական պատրաստություն | — | |
| 12. Քննական ստուգումներ | 8 | ժամ |
| Ընդամենը | 150 | ժամ |

## ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

### I. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ (10 ժամ)

*Ընթացիկ քաղաքականություն։ Պարապմունքների թեմաները մշակվում են Պաշավիաքիմի սովետի կողմից և համաձայնեցվում են Համկ(բ)Պ մարզային (երկրային) կոմիտեների հետ։*

### II. ՊԱՀԱԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ (6 ժամ)

*Պահակների սպառազինումը։ Ժամապահների փոխումը։ Կարգը պահականոցում։ Պահակների պատրաստությունը զործողության համար։ Ժամապահների հատուկ պարտականությունները։*

*Դեռքերի և գաղոնքների պարտականությունները։*

Ձեռնարկ։ *ԲԳԿԲ պահակային ծառայության կանոնագիրք* (УКС—36), §§ 11—15, 42—56, 67—68, 89—94, 125—133։

### III. ՇԱՐԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ (12 ժամ)

#### Անհատ մարտիկի

Կրկնել։ *Հրացանային պրիյոմները՝ «փոկի առ», «ոտքիդ», «ձեռքիդ», «ուսիդ առ», «ոտքիդ»։*

*Հակագազ հագնելը և հանելը։ վաղեվաղքեր և սողումներ դենքով։*

*Պրիյոմներ՝ «մարտի», «ձեռքիդ», խոցումներ—կարճ և երկար։*

Ուսումնասիրել։ *Վանումներ «դեպի աջ», «դեպի ձախ», «ցած աջ», «ցած ձախ»։ Հարվածներ կոթով։*

Ձեռնարկ։ *Հետևակի շարային կանոնագիրք*, 1938 *թ.* §§ 44—83, 86—87։ *Ձեռնամարտի հրահանգ* (НПРБ—38) §§ 48—68։

#### Ջոկի կազմում

Կրկնել։ *Ջոկի բացազատված և երթային շարքերը։*

Ուսումնասիրել։ *Ջոկի մասնատած շարքերը—շրջթա և օձաշար, շարժում մասնատած շարքերում, ուղղության փոխումը։ Ջոկի անցնելը երթային շարքից ոձաշարի և շղթայից ոձաշարի։ Ջոկի շարքերը դահուկներով։*

Ձեռնարկ։ *Հետևակի շարային կանոնագիրք* 1938 *թ.*, §§ 104—141։



### IV. ԿՐԱԿԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ (45 ժամ)

#### 7,62 մմ ՀՐԱՑԱՆԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄԱՍԸ (4ժամ)

Կրկնել։ *Հրացանի մարտական հատկությունները և նշանակումը։ Հրացանի կառուցվածքը։ Հրացանը պահելը և խնամելը։ Հրացանը քանդելն ու հավաքելը։ Անվտանգության միջոցները։*

Ուսումնասիրել։ *Հրացանի մասերի և մեխանիզմների աշխատանքը, հրացանի խփելու ստուգումը և հրացանը նորմալ խփելուն բերելը։*

Ձեռնարկ։ НСД—38, *Հրացան*, *էջեր՝* 8—34, 40—60, 67—72։

#### 1914/30 *թ.* *Եվ* 1933 *թ.* *ՏԻՊԱՐԻ ՁԵՌՔԻ ՆՈՆԱԿԻ* ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄԱՍԸ (4 ժամ)

*Ձեռքի նոնակի մարտական հատկությունները և նշանակումը։ Նոնակի և բուժինի (զապալի) կառուցվածքը։ Նոնակի մասերը և մեխանիզմները։ Նոնակի մասերի և մեխանիզմների աշխատանքը լցնելու և նետելու ժամանակ։ Նոնակի հետ վարվելը։ Անվտանգության միջոցները։*

Ձեռնարկ։ НСД—38, *Ձեռքի նոնակ*, *էջեր՝* 7—33։

#### *ՀՐԱՁԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ* (4 ժամ)

*Ձիգ, վառոդային պաղերի դոյացումը և աշխատանքը փողի մեջ։ Գնդակի շարժումը փողանցքի մեջ, ակոսների նշանակությունը։ Հասկացողություն սկզբնական արագության մասին. հետագծի դոյացումը։*

հասկացողություն չեղումի (դեբիվացիա) մասին. հասկացողություն ուղիղ ձիգի մասին. հեռադիտակի ուսումնասիրությունը մինչև 400 մետր հեռավորությունը: Ձիգերի ցրումը: Հրաձգության դիպուկության վրա ազդող պատճառները, որոնք կախված են հրաձգից, զենքից և եղանակից:

Ձեռնարկներ: Պոնոմարեվ—Կիրառական ձգաբանություն հրաձգի համար, Ռազմահրատարակչություն, 1939 թ., էջեր՝ 39—60, 80—86, 92—102, 157—162, 182—207:

Ա. Կարաչեվսկի—Սովորիր դիպուկ կրակել, էջեր՝ 26, 41—48:

## ՀՐԱՁԳՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ (13 ժամ)

Մարտական հրացանով հրաձգության ձևերն ու կանոնները: Հրաձգության պատրաստվելը՝ պառկած, ծնկից, նստած, կանգնած՝ հենարանից և ծակարանի հետևից: Լցնելը և նշանոցը հասցնելը:

Կոթն ուսին դեմ տալը, նշան բռնելը և հրահանն իջեցնելը: Հաստոցից նշան բռնելու և հրահանն իջեցնելու միատեսակության և ճշտության ստուգումը: Նշանառության ստուգումն իրական հեռավորությունների վրա:

Երևացող նպատակների վրա հրաձգություն կատարելու պրակտիկա: Մարզանք հրաձգության բոլոր ձևերի կատարման գործում:

### Մարտում հրացանով կրակ վարելու կանոնները

Հրաձգության համար տեղի և դրության ընտրությունը. մարտադաշտի դիտողությունը, նպատակի ընտրությունը, նշանոցի հաստումն ըստ հեռավորության, նշանառության կետի ընտրությունը: Հեռավորությունների աչքաչափով որոշումը մինչև 400 մ. հեռավորության սահմաններում և մինչև 1/10 ճշտությամբ:



Ձեռնարկ: НСД—38, Հրացան 1891/1930 թ. տիպարի, էջեր՝ 47—89, 93—104:

## ՍԿԶԲՆԱԿԱՆ ՀՐԱՁԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ (20 ժամ)

Փոքրակալիբր զենքով ТОЗ—8, ТОЗ—9 հրացանով:

### Նախապատրաստական վարժություն

(Երևացող նպատակի վրա)

1) Նպատակը—թիրախ № 12 (կրծքաչափ), 5 անգամ փոքրացրած. Ֆիգուրը երևան է գալիս վահանի ֆոնի վրա, 3 անգամ, 10 վայրկյանով, ամեն անգամ 20 վայրկյան ընդմիջումներով:
2) Հեռավորությունը—50 մետր.
3) Փամփուշտները—3.
4) Դրությունը հրաձգության համար—պառկած՝ ձեռքից.
5) Դիպումները ցույց տալը—բոլոր ձիգերից հետո.
6) Գնահատականը—ֆիգուրը հարվածել 2 գնդակով.

Հրաձիգը պատրաստվում է հրաձգության մինչև նպատակի երևան գալը: Նպատակի երևան գալուն պես, նա ինքնուրույն կերպով կրակ է բաց անում:

### ՄԱՐՏԱԿԱՆ ՀՐԱՑԱՆՈՎ

#### 1-ին վարժություն

1) Նպատակը—թիրախ № 9 (գլխաչափ).
2) Հեռավորությունը— 100 մետր.
3) Փամփուշտները—3.
4) Դրությունը հրաձգության համար—պառկած՝ ձեռքից, օգտագործելով հենարանը կամ փոկը.
5) Ժամանակը հրաձգության համար—անսահմանափակ.
6) Գնահատականը—ոչ մի գնդակ դուրս չթողնել № 8 շրջանից (ֆիգուրին դիպցնելը պարտադիր չէ):

2-րդ վարժություն (անշարժ նպատակի վրա)

1) Նպատակը— թիրախ № 9-a (կրծքաչափ).
2) Հեռավորությունը— 300 մետր.
3) Փամփուշտները— 3.
4) Դրությունը հրաձգության համար— պառկած՝ ձեռքից, օգտագործելով փոկը կամ հենարանը.
5) Ժամանակը հրաձգության համար— անսահմանափակ.
6) Դիպումները ցույց տալը— յուրաքանչյուր ձիգից հետո.
7) Գնահատականը. «գերազանց»— 24 աչկո, «լավ»— 21 աչկո, «միջակ»— 18 աչկո:

3-րդ վարժություն (երևացող նպատակների վրա)

1) Նպատակը— թիրախ № 12 (կրծքաչափ), որ երևան է գալիս 3 անգամից ոչ ավելի, ամեն անգամ 10 վայրկյան ժամանակով.
2) Հեռավորությունը— 200 մետր.
3) Փամփուշտները— 3.
4) Դրությունը հրաձգության համար— պառկած՝ ձեռքից, առանց փոկի.
5) Ժամանակը հրաձգության համար— որոշվում է նպատակի երևան գալով.
6) Դիպումները ցույց տալը— բոլոր ձիգերից հետո.
7) Գնահատականը. «գերազանց»— ֆիգուրը հարվածել 3 գնդակով, «լավ»— 2 գնդակով, «միջակ»— 1 գնդակով:

Կատարման կարգը. հրամանատարը ցույց է տալիս հրաձգին հրաձգության տեղը, որտեղ և որքան ժամանակով երևան կգա նպատակը. հրաձիգը պատրաստվում է հրաձգության, լցնում է հրացանը մինչև նպատակի երևան գալը. նպատակը երևան է գալիս հրամանատարի հրամանով:



## ՆՌՆԱԿՆԵՐԻ ՆԵՏՈՒՄԸ

1-ին նախապատրաստական վարժություն

1) Վարժության նշանակումն է՝ պրակտիկա տալ ձեռքի (հարձակողական) նռնակներ նետելու, քայլելիս, հորիզոնական նպատակի վրա.
2) Նպատակը— խրամատ 1,5 մ. խորությամբ, 1 մետր լայնությամբ և 3 մ. երկարությամբ. խրամատի ետևում խրուվիլակ (չուչելո) է դրած սվինով խոցելու համար:
3) Հեռավորությունը— 30 մ.
4) Նռնակների քանակը— 3 վարժական.
5) Ժամանակը— 1 րոպե.
6) Գնահատականը. «գերազանց»— խրամատին դիպցնել 3 նռնակ, «լավ»— 2 նռնակ, «միջակ»— 1 նռնակ: Գնահատականը տրվում է նռնակի առաջին անկման տեղի համեմատ:

Կատարման կարգը. Հրաձիգը նպատակից 70 մ. հեռակայությունից գնում է արագ քայլով և նպատակից ոչ պակաս, քան 30 մ. վրա նետում է նռնակները քայլելիս, որից հետո «ուռա» կոչելով, առաջ է վազում, հաղթահարում է խրամատը և խոցում խրուվիլակը (չուչելոն): Ժամանակը հաշվվում է մարտիկի շարժվելու սկզբից:

2-րդ նախապատրաստական վարժություն

1) Վարժության նշանակումն է՝ պրակտիկա տալ ձեռքի (հարձակողական) նռնակներ նետելու ուղղաձիգ նպատակների վրա.
2) Նպատակը— 3 պատուհան 100 սմ. բարձրությամբ, 70 սմ լայնությամբ, դեռնից 1—2 մետր բարձրության վրա դրած.
3) Հեռավորությունը մինչև նպատակները՝ մինչև 1-ինը— 10 մ., 2-րդը— 12 մ. 3-րդը— 15 մ.

4) Նռնակների քանակը— 3 վարժական։
5) Ժամանակը— 1 բոպե։
6) Գնահատականը։ «գերազանց»— դիպցնել 3 պատուհանի, «լավ»— 2 պատուհանի, «միջակ»— 1 պատուհանի։

Կատարման կարգը։ Հրաձիգը, նռնակներն ստանալով կրակի բնագծից 25 մետրի վրա, սողում է հրացանով և նռնակներով դեպի կրակի բնագիծը և ամենամոտիկ պատուհանից 10 մ։ վրա նետում է նռնակները բոլոր երեք նպատակի վրա «ծնկած» դրությունից։ Ժամանակը հաշվվում է սողալու սկզբից։

## V. ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ (38 ժամ)

### ՄԱՐՏԻԿԸ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ (4 ժամ)

Հետախուզության խնդիրները, վայրի ուսումնասիրությունը, շարժման համար թագուն ճանապարհի ընտրությունը։ Հետախուզության եղանակները և քողարկման միջոցները։ Դիտողության ձևերը։ Բնակավայրերի, անտառների, դեպային արգելքների և այլոց գնության տեխնիկան։ Զեկուցագրերի փոխանցումը։

Ձեռնարկ։ БУП—38, մասն 1-ին, § § 55, 65, 93—95։

Համազորական պատրաստություն, էջեր՝ 40—45։

### ՄԱՐՏԻԿԸ ՀԱՐՁԱԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ (10 ժամ)

Մեկ կրակի բնագծից դեպի մյուսը ծածուկ շարժման եղանակները (վաղեվազքեր, սողումներ, դահուկներով և առանց դահուկների)։ վայրին հարմարվելու տեխնիկան և քողարկումը։ Շարժման եղանակները հրետանային և գնդացրային կրակի տակ։

Կրակի բնագծերում հակառակորդի կրակի տակ ինքնախրամատման տեխնիկան։ Կրակ վարելը, հաբևանի, գնդացիրների և հրետանու կրակի օգտագործումն առաջ շարժման համար։ Մարտադաշտի դիտողությունը։

Մարտիկի պարտականությունները հարձակման ժամանակ։

Ձեռնարկ։ БУП—38, մասն առաջին, §§ 25—33, 70—77։

### ՄԱՐՏԻԿԸ ԳՐՈՀԻ ԺԱՄԱՆԱԿ (6 ժամ)

Գրոհի ելման դրության ընտրությունը և քողարկումը։ Գրոհի նախապատրաստությունը կրակով։ Գրոհի շարժման տեխնիկան, ընդհուպ հրետանու և ականանետների կրակի ետևից։ Վճռական գրոհը հակառակորդի կրակային կետի վրա։

Ձեռնամարտ հակառակորդի խրամատներում և խրամուղիներում։ Հակառակորդի հետևյալ կրակային կետերի վրա գրոհ տալը։ Հարևանին օգնելը։ Գործողություններ անհաջող գրոհի դեպքում։ Մարտիկի պարտականությունները գրոհի ժամանակ։

Ձեռնարկ։ БУП—38, մասն առաջին, §§ 29—32։

### ՄԱՐՏԻԿԸ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ (8 ժամ)

Պաշտպանության համար տեղի ընտրությունը։ Պառկած, ծնկից, կանգնած՝ խրամատ փորելը։ խրամատի, հրաձգի խրեն և զենքի քողարկումը հակառակորդի դիտողությունից և կրակից։ Տեղական առարկաների հարմարեցումը պաշտպանության համար։ Մարտադաշտի ու հարևանի դիտողությունը։ զեկուցում նկատածի մասին։ Մինչև նպատակները եղած հեռավորությունների որոշումը, նպատակների գնահատումը, կրակ վարելը և կրակի ճշտումը։

Հրաձգի պարտականությունները պաշտպանության ժամանակ։

Ձեռնարկ։ БУП—38, մասն առաջին, §§ 33—40, 70—77։

## ՄԱՐՏԻԿԸ ԵՐԹՈՒՄ ԵՎ ԵՐԹԱՑԻՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ (6 ժամ)

*Իրեն, զենքի և հանդերձանքի նախապատրաստությունը երթի համար: Ցրտահարության, ջերմահարության և արևահարության դեմ միջոցներ ձեռք առնելը: Դիտակալի շարժման կանոնները, տեղական առարկաների գնուությունը, գործողություններ հակառակորդին հանդիպելու դեպքում, զեկուցում դեռքի ավագին: Կապավորի, լրատարի ու վարոսի պարտականությունները: Մարտիկի պարտականությունները երթի ժամանակ:*

Ձեռնարկ· БУП—38, *մասն առաջին*, §§ 66:

## ՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊՈՍՏ ԵՎ ԴԱՂՈՆՔ (4 ժամ)

*Պահպանական պոստի և դաղոնքի խնդիրները: Ժամապահի և նրա օգնականի պարտականությունները· դաղոնքի կազմը և նրա պարտականությունները:*

Ձեռնարկ· БУП—38, *մասն առաջին*, §§ 42—54:

## VI· ՔԻՄԻԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ (6 ժամ)

*Սովորեցնել, թե ինչպես օգտվել պաշտպանական դուլպաներով և թիկնոցով, հայտաբերել ԹՆ-ով վարակված տեղամասերը և հաղթահարել դրանք:*

Ձեռնարկ· *Համազորական պատրաստություն, ՍՍՌՄ Պաշտպանության ԿՍ հրատ.—38 թ.*, էջեր՝ 234—248:

## VII· ՍԱՊՅՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ (6 ժամ)

*Հրաձգության համար տեղի ընտրությունը, պատկած և ծնկից բջիջի փորում: Փոքր բահով աշխատելու տեխնիկան ու ձևերը: Բջիջի, իրեն և զենքի քողարկումը:*

Ձեռնարկ: *Ճարտարագիտական դործի հրահանգ ԲԳԿԲ հետևակի համար* (ИНЖ· II—39), § § 43—52, 61—65·



## VIII· ՏԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ 10 ժամ)

*Կողմնորոշում վայրում կողմնացույցի, քարտեզի, ժամացույցի օգնությամբ: Կարողանալ քարտեզի վրա գտնել իր կանգնած կետը: Քարտեզի վրա գտնել այն առարկաները, որոնք ցույց են տրված վայրի վրա և ընդհակառակը: Շարժում քարտեզով, ճանապարհներով և առանց ճանապարհների, տվյալ ուղղությամբ (ազիմուտով):*

Ձեռնարկ· *Շերալին.— Ռազմական Տեղագրություն*, էջեր՝ 80—93:

## IX· ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ (6 ժամ)

*Սովորեցնել մարտիկին, թե ինչպես պահպանել անձնական առողջապահությունը, մաքուր պահել շենքը, ինքնօգնություն և փոխօգնություն ցույց տալ վիրավորման և ԹՆ-ով վնասման դեպքում:*

## ԱՆՁՆԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

*Անձնական մաքրության նշանակությունը: Մաշկի, ձեռքերի, ականջների, առամների և մազերի խնամումը: Ոտների, ոտնամանների և հագուստի խնամումը: Շենքի առողջապահությունը զորանոցում և լաղերում· մաքրությունը և քամահարումը, արտաքնոցները մաքուր վիճակում պահպանելը:*

## ԻՆՔՆՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՓՈԽՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՎԻՐԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԹՆ-ՈՎ ՎՆԱՍՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

*Առաջին օգնության վիրակապական կապոց: Հակաքիմիական կապոց: Վիրակապական և հակաքիմիական կապոցով օգտվելը: Վերքը կապելու նախապատրաստությունը: Վերքի վրա վիրակապ դնելը, արյունհոսության դադարեցումը: Առաջին օգնություն ոսկորների կոտրվելու դեպքում: Վիրավորին և ԹՆ-ով*

թունավորվածին օգնություն ցույց տալը: Վիրավորներին և ԹՆ-ից վնասվածներին դուրս բերելը:

Ձեռնարկ: Համաշխարհային պատրաստություն, ՍՍՌՄ Պաշտպանության 1938 թ. հրատարակություն, էջ՝ 263:

## X. ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ (3 ժամ).

Ի՞նչ է զինվորական կարգապահությունը կարմիր բանակում և ինչո՞ւմն է դրա էությունը: Ի՞նչն է կոչվում զինվորական պանցանք: Ինչո՞ւ հատկապես անթույլատրելի են կարգապահության կոլեկտիվ խախտումները: Ի՞նչ է զինվորական հանցանքը: Կարգապահական պատիժներ: Խրախուսանքի միջոցները: Բողոք տալու կարգը: ՍՍՌՄ-ի Կենտգործկոմի 1937 թվի որոշման բովանդակությունը և քաղաքական նշանակությունը՝ «Հայրենիքին դավաճանելու համար պատժի մասին»:

Ձեռնարկ. Զինվորական կարգապահության կանոնագիրք:

## XI. ՖԻԶԻԿԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Ֆիզիկական պատրաստության վերաբերյալ ՊՍՊ-ի կրծքանշանի 1 աստիճանի նորմաները հանձնել ֆիզկուլտուրային կազմակերպությանը և դրանից այդ մասին համապատասխան տեղեկանք ունենալ:

## ՔՆՆԱԿԱՆ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ ԱՆՑԱԾ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (8 ժամ)

1. Գիտելիքների ստուգում ներկա ծրագրի ծավալով:
2. Հետևյալ քննական վարժությունների կատարում:



### ա) ՔՆՆԱԿԱՆ ՀՐԱԶԳՈՒԹՅՈՒՆ ՄԱՐՏԱԿԱՆ ՓԱՄՓՈՒՇՏՆԵՐՈՎ

1-ին վարժություն (անշարժ նպատակի վրա)

1) Նպատակը— թիրախ № 9—ա (կրծքաչափ).
2) Հեռավորությունը— 300 մետր.
3) Փամփուշտները— 2 փորձնական և 3 քննական.
4) Դրությունը հրաձգության համար— պառկած՝ ձեռքից. (թույլ է տրվում փոկի օգտագործումը).
5) Ժամանակը հրաձգության համար— անսահմանափակ.
6) Գնահատականը— ֆիգուրը հարվածել 3 գնդակով. «գերազանց»— 26 աչկո, «լավ»— 22 աչկո, «միջակ»— 20 աչկո:

Փորձնական հրաձգության կատարման կարգը. Հրաձիգը պատրաստվում է հրաձգության, լցնում է հրացանը երկու փամփշտով պահունակից և հրահանգչի հրամանով կրակ է բաց անում: Փորձնական ձիգերի դիպումները ցույց տալը— յուրաքանչյուր ձիգից հետո:

Քննական հրաձգության կատարման կարգը. Հրահանգչի հրամանով հրաձիգը պատրաստվում է հրաձգության և լցնում է հրացանը երեք փամփշտով պահունակից. հրահանգչի «կրակ» հրամանով հաջորդաբար 3 ձիգ է կատարում:

2-րդ վարժություն (երևան եկող նպատակի վրա)

1) Նպատակը— թիրախ № 12 (կրծքաչափ չբրջակտրած), վայրի ֆոնի վրա.
2) Հեռավորությունը— 300 մետր.
3) Փամփուշտները— 3.
4) Դրությունը հրաձգության համար— պառկած

(թույլ է տրվում օգտագործել փոկը կամ հենարանը),

5) Ժամանակը հրաձգության համար— որոշվում է նպատակի երևան գալով.

6) Գնահատականը— «գերազանց»— ֆիգուրը հարվածել 3 գնդակով, «լավ»— 2 գնդակով, «միջակ»— 1 գնդակով:

Կատարման կարգը. Հրահանգչի հրամանով հրաձիգը պատրաստվում է հրաձգության և հրացանը լցնում է նպատակի երևան գալն սկսվելուց առաջ: Նպատակի երևան գալուն պես, նա կրակ է բաց անում: Նպատակը երևան է գալիս 3 անգամ միևնույն տեղում 7 վայրկյանով, 10—15 վայրկյան ընդմիջումներով:

## բ) ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՆՈՒՆԱՆԵՏՈՒՄԻՑ

1-ին նախապատրաստական վարժություն:

### ՓԱՄՓՈՒՇՏՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԸ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՀՐԱՁԳԻ ՀԱՄԱՐ

| | Մարտուկ. 7, 62 մմ | փ/կ |
|---|---|---|
| Նախապատրաստական վարժությունների համար . . | 9 | 5 |
| Քննական հրաձգության համար . . . . . | 8 | — |
| ՌՈՒԲ պետի ուղերվը . . . . . | 3 | 3 |
| Ընդամենը . . . . . | 20 | 8 |

Հայ. ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Գրադարան
ՀՍԽՀ-ՍՍՌ Ա. Մասիսյան անվան



Պատ. խմբագիր՝ Վ. Գրիգորյան
Թարգմանիչ և սրբագրիչ՝ Պ. Աքայան
Տեխ. խմբագիր՝ Վ. Խաչատրյան

ՀՀ Ազգային գրադարան
NL0204442

ՎՖ 2403, պատվեր 875. տիրաժ 3000

Հանձնված է արտադրության 16/IX 1940 թ.
Ստորագրված է տպելու 28/IX 1940 թ.

ՀՍՍՌ ԺԿՍ-ին կից թերթերի և ամսագրերի տպարան, Երևան

40. 819